ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 38. Արտահերթ ընդհանուր ժողովը

1. Արտահերթ ընդհանուր ժողով անց է կացվում ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև այն բոլոր դեպքերում, եթե դա են պահանջում ընկերության և նրա մասնակիցների շահերը:

~~2. Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է ընկերության գործադիր մարմնի կողմից:~~

2. Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է ընկերության գործադիր մարմնի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով:

Ընկերության գործադիր մարմնի կողմից պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով ընդհանուր ժողով գումարելու պահանջ ներկայացնելու պահից 30 օրացույցային օրվա ընթացքում ընդհանուր ժողով չգումարվելու դեպքում պահանջը ներկայացրած մասնակիցը (մասնակիցները) կարող է (են) գումարել ընդհանուր ժողով:

Պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով ընդհանուր ժողով գումարվելու դեպքում ժողովի գումարման ձևը և օրակարգը սահմանվում են այն գումարելու պահանջը ներկայացրած մասնակցի (մասնակիցների) կողմից:

3. Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում և անց է կացվում հերթական ընդհանուր ժողովի հրավիրման և անցկացման համար՝ սույն օրենքով սահմանված կարգով: